DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ
Archbishop Khajag Barsamian, Primate

Թիւ 2031
Ապրիլ 13, 1995

Արժանաշնորհ
Տ. Բարի Քհնյ. Մէթնեան
Հովիւ Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Ուինվուտ.

Սիրելի Տէր Բարի,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Մարտ 8, 1995 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 12, 1995-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի վեց անդամներ։ Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը։

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Տոքթ. Ճէրի Վուլմըգ
Աշի Չաքմաքլեան
Հրանդ Թուրունեան
Անտրու Քէշիշեան
Տիրան Մագմանեան
Ալիշա Կրէկ

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը։

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք հետեւեալները. Տարեկան Ժողովի դիւանի ընտրութիւնը եւս պէտք է կատարուի գաղտնի քուէարկութեամբ եւ երկպատիկ ցանկի վրայէն։ Ծխական Խորհուրդի տեղեկագիրը պէտք է ստորագրուի Ատենապետին եւ Ատենադպիրին կողմէ։ Առաջնորդարանի կողմէ ղրկուած հարցաթերթիկներու հաշուական տեղեկագիրները (էջ 7, 9 եւ 12) ամբողջական չեն։

Կ՛օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթենք որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորին եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ։

Սիրոյ ողջունիւ

ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ

630 SECOND AVENUE, NEW YORK, NY 10016-4885 TELEPHONE 212.686.0710 FAX 212.779.3558